31.03.2022 թ.
349-85

Կադաստրի կոմիտեի ղեկավար
Սուրեն Թովմասյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Թովմասյան,

Ինֆորմացիայի ազատության կենտրոնը ապրիլի 22-ին տեղեկություն ստանալու հարցում է ուղարկել Երևանի քաղաքապետարան, խնդրելով տրամադրել տեղեկություն այն մասին, թե Երևան քաղաքի հանրային սեփականություն հանդիսացող հողատարածքների վրա քանի ապօրինի կառույց և/կամ շինություն կա։

Պատասխան գրության մեջ Քաղաքապետարանը նշել է, որ «Երևանի քաղաքապետարանում՝ համայնքային հողի վրա ապօրինի կառույցների ընդհանուր քանակի հաշվառման գործառույթ չի իրականացվում» և առաջարկել հարցումը վերահասցեավորել կառավարությանն առընթեր ոլորտի պատասխանատու պետական գերատեսչություն (պատասխան գրությունը՝ կից)։

Ուստի, ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում ենք տրամադրել տեղեկություններ այն մասին, թե Երևան քաղաքի հանրային սեփականություն հանդիսացող հողատարածքների վրա քանի ապօրինի կառույց և/կամ շինություն է հաշվառված։

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել Տեղեկատվության ազատության մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ուշադրություն։ Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով։***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am